ՍԻՍԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԸ

Ս. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հայ դասական ճարտարապետությունից քիչ կոթողներ են պահպանվել։ Էլ ավելի քիչ է այն հուշարձանների թիվը, որոնք մեզ են հասել կանգուն վիճակում, առանց էական վերափոխումների։ Անգնահատելի է այս կարգի կառուցվածքների արժեքը—նրանք կարծես յուրահատուկ ուղենիշներ լինեն հայ ճարտարապետության զարգացման ամբողջ ճանապարհին, հենակետեր, որոնցից ելնելով հնարավոր է պարզել ճարտարապետական արվեստի մի շարք դեռևս չլուսաբանված կարևոր հարցեր։ Նման եզակի հուշարձանների թվին է պատկանում դեռևս համարյա թե չուսումնասիրված Սիսավանի տաճարը, որի բարձրաքանդակները պատկանում են միջնադարյան քանդակագործական արվեստի նշանավոր գործերի թվին։

Սիսավանի շրջանային կենտրոնի հյուսիսային կողմում բարձրացող բլրալանջի վրա վեր է խոյանում սևաթույր տուֆից կառուցված տաճարը։ Մատենագրական շատ կցկտուր տեղեկություններ են հասել մեզ այդ կառուցվածքի մասին. դրանցից հնագույնը պատկանում է Ստեփանոս Օրբելյանի գրչին։ Անվանելով հուշարձանը «Սիւնի վանք», նա գրում է. «Եկեղեցին շքնաղ և նորակերտ ձևով կանգնեալ գմբէթայարկ խորան երկնանման, ի մեծ բարեպաշտուհւոյն Վարագայխտոյ՝ Սիւնեաց տիկնոջէ յառաջ քան զհայ թուականն, յանուն սրբոյ Լուսաւորչին եւ ուռաջն վանացն ի մէջ քաղցրահայեաց մեյդանին ոնեն իշխանքն տուն արքունի և ապարանք իշխանանիստ...»[1]։ Եկեղեցու վրա պահպանված մի շարք, անշուշտ VII դարին պատկանող, արձանագրություններից և ոչ մեկում չի հիշատակվում կառուցման թվականը, և պարզ է դառնում միայն, որ այն նվիրված է եղել Գրիգոր Լուսավորչին։

Թեև հուշարձանը հայտնի է եղել գրականության մեջ վաղ ժամանակներից-, սակայն ուսումնասիրողների մոտ չկա միահամուռ կարծիք նրա թվագրության մասին։ Որոշ հեղինակներ, առանց որևէ փաստական նյութի վրա հենվելու, այն հասցնում են VI դարի[2], մյուսները տաճարի թվագրման հարցը թողնում են անորոշ, նշելով, թե այն կարող է կառուցված լինել VI—VII դարերում[4], իսկ մի խումբ հեղինակներ էլ թվագրում են VII դարով[5]։ Ըստ Ն. Տոկարսկու, տաճարի ներքևի մասերը կառուցվել են նախքան արաբական արշավանքները, իսկ վերին մասերը՝ VII դարի երկրորդ կեսին[6]։

Ըստ իր հատակագծային հորինվածքի, Սիսավանի տաճարը մի քառաբսիդ կառուցվածք է, վերցված արտաքին պատերով կազմված ուղղանկյուն եզրագծի մեջ։ Նրա լայնությունը (հյուսիսից-հարավ) հավասար է 12,25 մետրի, իսկ երկարությունը (արևելքից-արևմուտք)՝ 16,20 մետրի։ Ճարտարապետական մտահղացման հիմնական ելակետն է գմբեթակիր քառակուսին, որի չորս հիմնական առանցքներով էլ տեղավորված են բավականին մեծ հենախորշեր, որոնք փաստորեն հավասար են միմյանց—կան սանտիմետրերի տարբերություններ միայն։ Արևելք-արևմուտք ուղղությամբ աբսիդների և գմբեթակիր քառակուսու միջև տեղավորված են բավականին լայն, ուղղանկյուն թաղածածկ էլեմենտներ (բեմաներ), որոնք և ստեղծում են տաճարի ձգվածությունը այդ հիմնական ուղղությամբ։

---

1 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 338։

2 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 213։ Ե. Լալայան, Սիսիան, «Ազգագրական հանդես», № 1, 1898, էջ 188։

3 Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, պրակ 2-րդ, Երևան, 1959, էջ 137։

4 А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII вв., Москва—Ленинград, 1950, էջ 22։

5 В. М. Арутюнян, С. А. Сафарян, Памятники армянского зодчества, Москва, 1951, էջ 12։ А. Б. Еремян, Храм Рипсиме, Ереван, 1956, էջ 102։

6 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1962, էջ 127։

Ընդհանուր հորինվածքի ոչ պակաս կարևոր մասն են կազմում անկյունային չորս սենյակները, դեպի ուր կարելի է անցնել գմբեթակիր քառակուսու անկյուններում տեղավորված և [illegible] շրջանաձև հատակագիծ ունեցող հենախորշերի միջով։ Վերջիններիս մեջ էլ արված են հատուկ բացվածքներ, որոնք և տանում են դեպի արևելյան ու արևմտյան կողմերում դասավորված սենյակները։ Այդ սենյակները քառակուսի են և նրանցից արևելյանները ունեն կանոնավոր, լայն աբսիդներ։



Սիսավանի տաճարի ընդհանուր տեսքը հարավից

Այս տիպի հնագույն կառուցվածքում՝ Ավանի տաճարում (590—609) նման աբսիդներ չկան։ Սակայն արդեն Արամուսի եկեղեցում կարելի է տեսնել մի փոքրիկ աբսիդ, արված արևելյան պատի հաստության մեջ։ Այդ աբսիդները ավելի նորմալ դասավորություն ունեն Հռիփսիմեի տաճարում (618). Սիսավանում նրանք արդեն ստացել են կղզայի չափեր, ու հար և նման են նույն դարում հայտնի ձևերին (Պտղնի, Թալին, Արուճ)։ Արևմտյան սենյակները ճիշտ քառակուսի են, և չունեն դեպի դուրս տանող բացվածքները, որոնք առկա են ավելի վաղ կառուցված հուշարձաններում (Ավան, Հռիփսիմե, Գառնահովիտ)։ Տաճարը տանող հիմնական մուտքերը դասավորված են հարավային և արևմտյան կողմերում, ընդ որում երկու մուտքերն էլ մեկ են հասել խիստ վերակառուցված դրությամբ։ Այսպես, արևմտյան մուտքը վերափոխված է ամբողջությամբ և հին որմածքից այնտեղ ոչինչ չի պահպանվել։ Հարավային մուտքից վերակառուցվել է արտաքին երեսապատումը միայն և հնագույն շքամուտքը փոխարինվել է XIX դարում ավելացված երեսակալով։ Տաճարը լուսավորվում է յուրաքանչյուր աբսիդում բացվող երեքական լուսամուտների միջոցով։ Բացի այդ, երկուական լուսամուտներ ունեն նաև ավանդատները։ Լուսամուտների նման առատությունը զգալիորեն տարբերում է այս կառուցվածքը նույնատիպ այլ հուշարձաններից։ Այսպես, Ավանի տաճարի աբսիդներում տեղավորված են մեկական լուսամուտներ միայն և նրանց քանակության ավելացման առաջին փորձերը տեսնում ենք Հռիփսիմեում, որտեղ եռանկյունաձև խորշերի առկայությունը հնարավորություն է տվել երեք լուսամուտ բացել տաճարի արևելյան աբսիդում։

Պաշտամունքային կառուցվածքների առատ լուսավորությունը յուրահատուկ էր VII դարի հուշարձաններին ընդհանրապես և նույն դարի երկրորդ կեսում կառուցված տաճարներին՝ մասնավորապես (Թալին, Արուճ)։ Նշանակալից չափեր ունեցող տաճարները առատ լույս էին ստանում նաև վերևից, որտեղ սովորաբար 12 նիստ ունեցող թմբուկների յուրաքանչյուր նիստում բացվում էր մեկ, բավականին մեծ լուսամուտ։ Այս տեսակետից ևս Սիսավանի տաճարը զգալիորեն տարբերվում է նույն դարի հանրահայտ լուծումներից։ Բանն այն է, որ այստեղ թմբուկը 12 նիստ ունի միայն արտաքինից, իսկ ներսից նիստերի թիվը հասնում է ընդամենը ութի։ Ահա մի էական հանգամանք, որը պայմանավորված էր մաքուր տրոմպային փոխանցման առկայությամբ։ Այստեղ դժվար չէ տեսնել, որ նման պայմաններում լուսամուտներ կարող էին տեղավորվել գլխավոր առանցքների ուղղությամբ միայն և նրանց քանակը, այսպիսով, չէր կարող չորսից ավելին լինել։ Թվում է, որ հենց այս հանգամանքն է ստիպել այնքան ինքնատիպ կերպով ավելացնել լուսամուտների քանակությունը տաճարի առաջին յարուսում և, բացի առանցքային դասավորություն ունեցող լուսամուտներից, յուրաքանչյուր աբսիդում բացել երկու լուսամուտ ևս, որոնք դուրս են գալիս կառուցվածքի ճակատները ձևավորող հոանկյուն, լայնանիստ խորշերում։



Սիսավանի տաճարը հատակագիծ

Ինչպես և նույնատիպ այլ կառուցվածքներում, այդ հոռանկյունաձև խորշերը ունեն խիստ էական կոնստրուկտիվ նշանակություն և, բացի այդ, հանդիսանում են արտաքին ճակատների ձևավորման հիմնական տարրերը։ Տաճարի ներքին հորինվածքի առավել կարևոր հանգույցներից են անկյունային շրջանաձև հենախորշերը և նրանցից վեր բարձրացող տրոմպները, որոնք և ստեղծում են ութանիստ թմբուկի անհրաժեշտ հենարանը։ Չորս աբսիդների և անկյունային հենախորշերի միջև տեղավորված պատերի հատվածները մշակված են որպես ութ հզոր մույթեր, որոնց վրա էլ հենվում են և՛ գմբեթակիր կամարները, և՛ տրոմպները։ Ինչպես այս տիպի այլ հուշարձաններում, անկյունային շրջանաձև հենախորշերը դասավորված են ոչ ճիշտ անկյունագծային ուղղություններով, այլ որոշ չափով շեղված են դեպի արևելք և արևմուտք։ Նրանց նման դասավորությունը բացատրվում է արևելյան և արևմտյան աբսիդների առջև ուղղանկյուն թաղածածկ հատվածների ավելացումով, հանգամանք, որը և բերել է գմբեթակիր կամարների ավելի մեծ թռիչքին՝ նշված ուղղություններում։

Սակայն նման շեղումը, որը անխուսափելի էր ներքևում, չէր կարող թույլատրվել վերևում, տրոմպների հարթության վրա։ Հակառակ դեպքում գմբեթը կրող տրոմպները ևս կունենային շեղակի դասավորություն, որն իր հերթին կհանգեցներ թմբուկի նիստերի անհավասարությանը, և հնարավոր չէր լինի նման եզրաձևի վրա տեղավորել ճիշտ շրջագծային կիսասֆերան։ Այդ է պատճառը, որ ճարտարապետը վերևում ուղղում է այս շեղակի դասավորությունը և տրոմպների ճակատային կամարները դասավորում գմբեթակիր քառակուսու անկյունագծերին ճիշտ ուղղահայաց։

Դժվար չէ տեսնել, որ ինչպես Սիսավանում, այնպես էլ նույնատիպ այլ հուշարձաններում, անկյունային փոխանցումների ձևերը սերտորեն կապված են գմբեթակիր քառակուսու անկյուններում տեղավորված շրջանաձև հենախորշերի ձևերի հետ։ Ամենից առաջ անհրաժեշտ է քննարկել այս անկյունային, 3/4 շրջանաձև հենախորշերի առաջացման նախադրյալները—ինչի համար են նրանք և ինչու նրանց չենք հանդիպում այլ հորինվածք ունեցող հուշարձաններում։ Դեռևս Հ. Ստրժիգովսկին իրավացի կերպով նշում էր Մաստարայի տիպի կառուցվածքների նշանակությունը Հռիփսիմեի տիպի հուշարձանների կազմավորման հարցում, նշում վերջիններիս անկյունային հենախորշերի առաջացումը որպես Մաստարայի տիպի կառուցվածքների անկյունային ուղղանկյուն մասերը ամրացնելու հետևանքով առաջացած հորինվածք։ Այդ դրույթը բաժանում

են նաև այլ ուսումնասիրողներ։ Սակայն թեև նման մոտեցումը սկզբունքային առարկություններ չի առաջացնում, բայց և այնպես չի էլ բացատրում հատկապես շրջանաձև հենախորշի մշակման անհրաժեշտությունը։ Չէ որ Մաստարայից հետո կառուցված Արթիկի մեծ տաճարում առկա են անկյունային մասերը զգալիորեն ուժեղանող $^3/_4$ որթասյուները, որոնց վրա են նստում տրոմպների հիմքերը։

Մեր կարծիքով, Հոռիփսիմեի տաճարի տիպի կառուցվածքներում $^3/_4$ շրջանաձև անկյունային հենախորշերի առաջացումը պետք է կապել ոչ թե Մաստարայի տիպի հորինվածքների անկյունային մասերը առհասարակ ուժեղացնելու ձգտման, այլ նույն այդ տիպի հուշարձաններում անխուսափելիորեն ստացվող խիստ մեծ թռիչք և անհամեմատ բարդ լուծում պահանջող տրոմպներից հրաժարվելու ցանկության հետ։ Այդ տրոմպների կառուցումը կապված էր մեծ դժվարությունների հետ և պահանջվում էր արտակարգ մեծ վարպետություն՝ նրանց երկաթից, շեղագիր քարերը արելու համար, ընդ որում. մի չնչին շեղումն արդեն կարող էր վտանգի տակ դնել ամբողջ կառուցվածքը։

Մինչդեռ տրոմպի փոխարինումը սովորական գմբեթարդով կվերացներ բոլոր դժվարությունները և այս՝ այնքան պատասխանատու հանգույցը կծածկվեր միանգամայն հուսալի և վարպետներին շատ լավ հայտնի գմբեթարդային եղանակով։ Տարբեր հուշարձաններում այդ հանգույցները լուծված են տարբեր ձևերով։ Ավանում օգտագործված են Մաստարայի աստիճանաձև դասավորություն ունեցող կամարները, ընդ որում, համարյա թե նույնությամբ կրկնվում են նաև պահոնակների ձևերը։ Սակայն Մաստարայում փոխանցման հետագա աստիճանները ամբողջապես մշակված են տրոմպային ձևերի հիման վրա։ Այստեղ առկա է կամարների և առագաստային փոխանցման տարրերի միահյուսումը—մի ձև, որը և ստեղծում է գմբեթի թմբուկի անհրաժեշտ հիմնատակը։ Հոռիփսիմեում արդեն առկա է հատած կոնի սկզբունքով կազմավորված հովհարաձև տրոմպը, որի կողային մասերում նույնպես օգտագործված են առագաստային փոխանցման տարրեր։ Սիսավանում թեև պահպանված է այդ հիմնական ձևը, սակայն առագաստային փոխանցում բնավ չկա և ամեն ինչ լուծված է պարզ տրոմպային փոխանցումների հիման վրա։ Այստեղ նոաստիճան գլխավոր տրոմպների վրա անմիջապես հենվում է ներսից ութանիստ թմբուկի բաքար պատը, ընդ որում, անկյունագծային դասավորություն ունեցող այդ պատի վրա չկա և ոչ մի բացվածք, ոչ մի լուսամուտ։ Թմբուկի բացվածքները դասավորված են հարևան նիստերի կենտրոններում, և այսպիսով բավականին մեծ տրամագիծ ունեցող գմբեթը լուսավորվում է ընդամենը չորս լուսամուտի միջոցով, անմիջականորեն կապված ներքին կոնստրուկտիվ լուծման և թմբուկի արտաքին եզրաձևի հետ։

Ներքին ութանիստ թմբուկի նիստերի հատման վերին անկյուններում տեղավորված են ութ՝ մեկ քարի մեջ փորված փոքրիկ տրոմպներ, որոնք և ստեղծում են գմբեթի կիսասֆերայի 16 անկյուն ունեցող բազմանիստ հենարանը։

Տաճարի նախնական գմբեթից մեզ են հասել ներքին հինգ շարքերը միայն։ Վերին շարքերը, ինչպես և ծածկերն առհասարակ, ավելացվեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի շինարարության գործերի պետական կոմիտեի հուշարձանների պահպանության բաժնի կողմից 1959—1960 թթ. ընթացքում։ Տաճարի ինտերյերը մշակված է պարզ ու հստակ ձևերով, և խաղողի ողկույզներով ու տերևներով մշակված իմպոստային խոյակները են միայն, որ ձևավորում են դեպի վեր ձգվող որմնամույթերը։ Դժվար չէ տեսնել, որ գլխավորը, հիմնականը այստեղ ներքին տարածությունների մշակումն է, երբ ի մի են խմբավորված կենտրոնական գմբեթակիր տարածությունը, տրոմպային փոխանցումների լայն գոտին և վերասլաց համաչափություններ ունեցող գմբեթը, իր ութանիստ թմբուկով և ամբողջ հորինվածքը պսակող գմբեթի կիսասֆերայով։ Տաճարի արտաքին ծավալային ձևերը լուծված են մինչ այդ արդեն լավ հայտնի սիստեմների հիման վրա, և ճակատների մշակման հիմնական տարրերն են նոանկյունաձև հատակագիծ ունեցող, ուժեղ, վերասլաց խորշերը։ Ինչպես և այդ տիպի այլ հուշարձաններում, անկյունային սենյակներին համապատասխանող հատվածները անհամեմատ ավելի ցածր են և խաչաթևերի հատման վայրում տեղավորված է ոչ շատ բարձր գմբեթակիր քառակուսին։ Վերջինիս վրա էլ բարձրանում է 12 նիստ ունեցող թմբուկի ծավալը, մշակված բավականին սլացիկ համաչափություններ ունեցող կամարաշարքով։ Դժբախտաբար տաճարի ներքևի մասերը ժամանակին ենթարկվել են զգալի վերափոխումների։ Ղ. Ալիշանի կողմից հրատարակված գրչանկարից պարզ է դառնում. թե ինչ ցավալի գրության էր հասել տաճարը և ինչքան մեծ էին նրա վնասվածքները[7]։ XIX դարի վերջում կատարված անշնորհք վերակառուցումները էլ ավելի աղճատեցին

[7] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 213։

տաճարի սկզբնական ճարտարապետական ձևերը և նրանց մի մասը հնարավոր եղավ վերականգնել 1959—1960 թթ. կատարված աշխատանքների ժամանակ։ Սակայն պետք է ասել, որ առանձին մասերը այնպես էլ մնացին իրենց ներկա դրությամբ և պարզապես հնարավոր չէր վերականգնել սկզբնական դրությունը։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել շատ էր տուժել տաճարի արևմտյան պատը այստեղ ամբողջապես վերակառուցվել էր արսիդի կենտրոնական մասը, ներառյալ մուտքը և լուսամուտները։ Նոր որմածքը հասնում է մինչև գմբեթակիր կամարների իմպոստային խոյակները, ընդ որում, ամենայն հավանականությամբ վերափոխվել են նաև վերջիններս՝ սրանք այժմ հարթ են, առանց դեկորատիվ ձևերի, մինչդեռ մյուս բոլոր կամարների իմպոստները մշակված են հիանալի ոլորաձարդ խոյակներով։ Կողային լուսամուտներից, որոնք ժամանակին բացվում էին եռանկյունաձև խորշերի մեջ, պահպանվել են միայն ներսի եզրագծերը։ Նոր որմածքը արտաքին ճակատում հասնում է մինչև խորշերը պսակող գոտին, իսկ հորիզոնական ուղղությամբ բռնում է խորշերի միջև ընկած ամբողջ տարածությունը, հյուսիսային կողմում շարունակվելով մինչև տաճարի հյուսիս-արևմտյան անկյունը։

Հյուսիսային ճակատում փակված են բոլոր երեք լուսամուտները։ Ընդսմին, դատելով շարվածքից, նրանք փակվել են բավականին վաղ ժամանակներում։ Հարավային ճակատում անաղարտ է մնացել միայն կենտրոնական լուսամուտը, արսիդի կողային լուսամուտները, ինչպես և ավանդատների լուսամուտները փակված են ամբողջապես։ Այստեղ լիովին վերակառուցվել է նաև շքամուտը։ Արևելյան ճակատում արսիդի լուսամուտներից պահպանվել է միայն մեկը, կողային լուսամուտները փակված են։

Եվ չնայած այս ամենին, տաճարի ընդհանուր կերպարը, նրա ծավալային հորինվածքը մեզ է հասել առանց էական աղճատումների, եթե չհաշվենք կղմինդրյա ծածկի բացակայությունը, որն այնքան յուրահատուկ էր VII դարի տաճարներին։ Տաճարի անաղարտ ձևով մեզ հասած տարրերից է նաև թմբուկը, իր այնքան ուշագրավ ձևերով հանդերձ։ Նշվեց վերը, որ այն ներսից ունի 8, իսկ դրսից՝ 12 նիստ, ընդ որում, համընկնում են միայն գլխավոր առանցքներով դասավորված նիստերի ուղղությունները, որոնցից յուրաքանչյուրի վրա էլ տեղավորված է սեպ. լուսամուտ։ Մեզ թվում է, որ այդ եզրաձևերից յուրաքանչյուրն ունի իր որոշակի նախադրյալները և նրանց առկայությունը ամենասերտ կերպով կապված է այն խնդիրների հետ, որոնք դրված էին ճարտարապետի առջև, տաճարի ինտերյերի և էքստերյերի մշակման ժամանակ։ Հաստատապես կարելի է ասել, որ թմբուկի ներքին ութանիստ հորինվածքը ինքնին արդեն կանխորոշվել էր մաքուր տրոմպային փոխանցման առկայությամբ։ Ինչ վերաբերում է արտաքին 12 նիստ ունեցող եզրաձևին, ապա կարելի է ենթադրել, որ այդ հորինվածքը ընդունվել է, ելնելով թմբուկի արտաքին արտահայտչականության պահանջներից։ VII դարի հայկական ճարտարապետության մեջ քիչ օրինակներ չկան, երբ թմբուկի արտաքին եզրաձևը բնավ չի կրկնում նրա ներքին հորինվածքը։ Նշենք Զվարթնոցը, Թարգմանչացը, Զորավարը, Իրինդը, որտեղ ներքին շրջագծային հորինվածքը պարփակված է եղել թմբուկի արտաքին բազմանիստ պատով։ Սակայն պետք է նշել, որ այս բոլոր կառուցվածքներում փոխանցման գոտին կամ ամբողջապես առագաստային է, կամ ներկայացնում է տրոմպային և առագաստային ձևերի միահյուսում։ Այն հուշարձաններում, որտեղ օգտագործվում էր մաքուր տրոմպային փոխանցման սիստեմը, թմբուկները որպես օրենք ներսից ունենում էին ութանիստ եզրանկար։ Փոքր հուշարձաններում այդ եզրաձևը կրկնվում էր նաև արտաքին ձևերում, իսկ ավելի մեծ կառուցվածքներում թմբուկի նիստերը փոքրացնելու նպատակով անկյունային մասերում տեղավորում էին ոչ մեծ եռանկյունաձև խորշեր (Մաստարա, Գառնահովիտ)։ Սիսավանում օգտագործվել է մեկ այլ տարբերակ՝ ներքին ութանիստ հորինվածքը, որն այստեղ ընդգրկված է 12 նիստ ունեցող բազմանիստի մեջ։ Դա հնարավորություն է տվել ստանալ համեմատաբար ոչ լայն նիստեր և հավորել վերջիններս հաճելի համաչափություններ ունեցող խուլ կամարաշարքով։ Սակայն եթե ներքին շրջագծային հորինվածք ունեցող թմբուկներում ոչինչ չէր խանգարում լուսամուտներ տեղավորել արտաքին եզրաձևի բոլոր նիստերի վրա, ապա այստեղ լուսամուտները կարող էին բացվել միայն գլխավոր առանցքներին ուղղահայաց դասավորված նիստերի վրա, որովհետև միայն այդ նիստերում էր, որ համընկնում էին ներքին՝ ութանիստ և արտաքին՝ 12 նիստ ունեցող եզրաձևերի նիստերի ուղղությունները։ Այսպիսով պարզ է դառնում, որ նման լուծման ժամանակ լուսամուտների քանակը ոչ մի դեպքում չէր կարող չորսից ավելին լինել։

Թմբուկը ձևավորող դեկորատիվ կամարաշարքը որպես այդպիսին լավ հայտնի է նույն շրջանի նաև այլ հուշարձաններում, և շնորհիվ նիստերի համեմատաբար ոչ մեծ լայնության, բուն կամարաշարքն ունի բավականին ձգված համաչափություններ։ Այստեղ առանձնապես ու-

շագրավ են անկյունացծային ուղղություններով դասավորված կիսասյուները, և, հատկապես, Նրանց բավականին մեծ բարձրություն։ Բանն այն է, որ արտաքինից ութանիստ թմբուկներ ունեցող հուշարձաններում գմբեթակիր քառակուսիների անկյունային մասերի ծածկերը, որոնք հպվում են անեւունացծային նիստերին և կղմինդրյա ծածկի ժամանակ ունենում զգալի բարձրություն (ինչպես այդ կարելի է տեսնել Կարմրավորի VII դարից մեզ հասած ծածկում) միանգամայն տրամաբանական են և կոնստրուկտիվ տեսակետից ոչ մի դժվարություն չեն ներկայացնում։ Մինչդեռ 12 նիստ ունեցող թմբուկներում, որոնք ձևավորված էին խուլ կամարաշարքով, նման լուծումը անշուշտ կառաջացներ զգալի դժվարություններ, որովհետև կամարաշարքի անկյունացծային ուղղությամբ դասավորված որմնասյուների զգալի մասը պարզապես կմնար անկյունային մասերի ծածկի տակ — մի բան, որը իր հերթին կբերեր կամարաշարքի ռիթմի կոպիտ խախտում։



Սիսավան. կտրվածք արևմուտքից-արևելք

Այդ պատճառով էլ բավ չի կարելի անսպասելի համարել, որ Սիսավանում, գմբեթակիր քառակուսու անկյունային մասերը ծածկված են եղել ոչ թե կղմինդրով, այլ տուֆի հարթ սալերով։ Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ նման լուծում ժամանակին եղել է նաև Թալինում։ Եվ իսկապես, միայն քարե ծածկի դեպքում է, որ հնարավոր էր ստանալ ծածկի այդ մասի այնքան փոքր թեքություն, ինչպիսին տեսնում ենք Սիսավանում։ Այստեղ շարքային և անկյունացծային դասավորություններ ունեցող զույգ որմնասյուների խարիսխների մակարդակների միջև եղած տարբերությունը հավասար է ընդամենը 40 սմ-ի։ Այսպիսով, Սիսավանի տաճարի

ցմբեթակիր քառակուսու անկյունային մասերի ծածկերում քարի սալերի օգտագործման փաստը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ պատմական հաջորդ շրջանում, այն է՝ IX—X դարերում, քարի սալերի լայն օգտագործումը նախորդ պատմական շրջանում արդեն նախապատրաստված էր և քարի սալերը, որպես ծածկանյութ, լավ հայտնի էին առնվազն VII դարի վերջում։ Մյուս կողմից պետք է նշել, որ կղմինդրի օգտագործումը ևս չընդհատվեց միանգամից, և IX—X դարերում կառուցված մի շարք հուշարձաններ ծածկված են եղել ոչ թե սալերով, այլ կղմինդրով։

Ինչպես նշում է Ն. Մառը, կղմինդրյա ծածկերի մնացորդները դեռևս պահպանվել էին և՛ Նիրակավանում, և՛ Օղուզլուում[8]— հուշարձաններ, երկուսն էլ կառուցված IX—X դարերի սահմանագծին։ Դատելով մոդելի ձևերից, կղմինդրյա ծածկ է ունեցել նաև Աղթամարի եկեղե-



Սիսավան. հյուսիսային ճակատ

ցին և հետագայում է միայն, որ այն փոխարինվել է քարով[9]։ Սիսավանի տաճարում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև բացվածքների՝ ըստ բարձրության տեղաբաշխ-

8 Ն. Մառի արխիվ, ֆոնդ 800, գործ A-2618, էջ 183։

9 Н. А. Орбели, О первоначальной форме купола Ахтамарского храма. Избранные труды, Ереван, 1963, էջ 222։

ման հարցը։ Բանն այն է, որ եթե այլ հուշարձաններում լուսամուտների կորձև մասերի կենտրոնները սովորաբար համընկնում են կամարաշարքերի կամարաղեղների կենտրոնների հետ, ապա այստեղ նրանք դասավորված են տեհամեմատ ավելի ցածր բարձրության վրա։ Մեր կարծիքով դա անշուշտ կապված է կամարաշարքին ավելի սլացիկ համաչափություններ տալու ձգտման հետ, որովհետև թմբուկի բարձրությունն ինքնին վերցրած մեծ չէր, և կամարաղեղների կենտրոնների էլ ավելի իջեցումը կհանգեցներ կամարաշարքի խիստ ցածրանիստ, ծանր համաչափությունների։ Երբ դիտում ենք կառուցվածքի կտրվածքը, ապա պարզ է դառնում, որ լուսամուտը ավելի բարձրացնել հնարավոր չէր։ Լուսամուտի կորագիծ եզրամասը համարյա թե գտնվում է գմբեթի կիսասֆերայի ներքևի սահմանի հարթության վրա, և հասկանալի է, որ լուսամուտի ավելի բարձր դասավորությանը կարելի կլիներ հասնել միայն մխրճելով վերջինիս կորագիծ վերջավորություն գմբեթի կիսասֆերայի մեջ—մի բան, որն անշուշտ չէր կարող թույլատրվել։

Թմբուկը պսակվում է ուժեղ ելուստ ունեցող և թեքադիր մասում հյուսվածո զարդաձևերով մշակված քիվով, որն իր ձևերով հար և նման է տաճարի մյուս մասերի քիվերին։ Այստեղ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում տաճարի գլխավոր առանցքների ուղղություններով, քիվերի թեքադիր մասերի վրա տեղավորված չորս ավետարանիչների բավականին ուժեղ ելուստ ունեցող պատկերաքանդակները։ Արևելյան ճակատում պատկերված է Ղուկասը, արևմտյան ճակատում՝ Մարկոսը, հյուսիսային ճակատում՝ Հովհաննեսը, իսկ հարավային ճակատում՝ Մատթեոսը։

Բարձրաքանդակները մշակված են համանման—բոլոր տեղերում էլ ավետարանիչները այ ձեռքերը բարձրացրել են մինչև ուսի հարթությունը և մատները ծալել օրհնելու համար, իսկ ձախ ձեռքերում բռնած ունեն ավետարանները։ Քիվերի վրա բարձրաքանդակներ տեղավորելը լավ հայտնի է VII դարում—նշենք Ջրվեժի 1958 թ. պեղումների ժամանակ հայտնաբերված VII դարին պատկանող մի անհայտ կառուցվածքի քիվի բեկորը, որի վրա պատկերված է խաչին երկրպագող կնոջ կերպարանք[10]։

Ինչ վերաբերում է կառուցվածքի զեկորատիվ ձևերին (ոլորագարդ խոյակներ, լուսամուտների և խորշերի պսակներ), ապա դրանք բոլորն էլ իրենց ձևերով հարազատ են հայ ճարտարապետության նույն այդ շրջանին։ Այսպես, օրինակ, ոլորագարդ խոյակները հայտնի են և Գտղնիում, և Ջրվեժում[11]։ Ուժեղ ելուստ ունեցող քիվերը, մշակված հյուսվածո զարդաձևերով, հայտնի են VII դարի բազմաթիվ հուշարձաններում (Զվարթնոց, Թալին, Արուճ, Զորավար և այլն), լուսամուտների պսակներում հանդիպող հորիզոնական նշազարդերը՝ Գայանեում, Զվարթնոցում, Թալինում, խաղողի որթի գալարուն զարդաձևերը VII դարի բազմաթիվ հուշարձաններում և այլն։ Սակայն դրա հետ միասին այստեղ հանդիպում ենք նաև մի շարք յուրահատուկ, հաջող մշակված մոտիվների, որոնցից առանձնակի աչքի է ընկնում արևելյան ճակատի խորշերի պսակները ձևավորող նոան զարդամոտիվը։

Տաճարի շինարարությանը մասնակցել են նաև քանդակագործ վարպետներ. անշուշտ միայն մասնագիտական բարձր պատրաստականություն ունեցող վարպետները կարող էին ստեղծել այն հիանալի պատկերաքանդակները, որոնք տեսնում ենք և՛ հարավային ու արևմտյան ճակատների խորշերի մեջ, և՛ տաճարի ներսում, փոքր ուրոմպների շարքում։ Դժվար չէ հասկանալ, որ այստեղ մենք գործ ունենք իսկապես բարձրարվեստ, գեղարվեստական մեծարժեք կերտվածքների հետ, որոնք իրենց ուրույն տեղը պիտի ունենան հայ արվեստի պատմության մեջ։ Մյուս կողմից, այդ բարձրաքանդակները մեծ հետաքրքրություն են ներկայացնում շնորհիվ այն մակագրությունների, որոնք կան նրանց վրա և որոնք հնարավորություն են տալիս պարզելու պատկերված անձանց ով լինելը—մի հանգամանք, որն իր հերթին հնարավորություն է տալիս ճշտելու տաճարի թվագրությունը։

Մեզ հետաքրքրող բարձրաքանդակները տեղավորված են տաճարի ներսում, ութանիստ թմբուկի վերին եզրին, փոքր տրոմպների շարքում։ Համաձայն նրանց վրա եղած մակագրությունների, հյուսիս-արևելյան փոքր տրոմպի մեջ պատկերված է Այունյաց տեր Կոհաղատ իշխանը, նրանից ձախ՝ Թեոդորոս վանականը, իսկ դեպի աջ՝ Այունյաց Հովսեփ եպիսկոպոսը[12]։ Այդ բարձրաքանդակների շարքում առանձնապես տպավորիչ է Կոհաղատ իշխանի պատկերաքանդակը։ Իշխանը ներկայացված է ազոթողի դիրքով, ձեռքերը պարզած դեպի արևելք։ Շատ ար-

---

10 Н. М. Токарский, Джруеж I, Ереван, 1959, էջ 33։

11 Նույն տեղում, էջ 13։

12 Ստ. Մնացականյան, Միսավանի պատկերաքանդակները և տաճարի կառուցման ժամանակը, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1961, № 10։

տահայտիչ են նշան տչքերը, և հատկապես՝ այքերի բիբերը, շեշտված երկճյուղ փորվածքնե-
րով—նրանք հատուկ արտահայտչականություն են տալիս իշխանի խրոխտ դեմքին, և դժվար
չէ կռահել, որ քանդակագործը արել է ամեն ինչ, պորտրետային նմանության հասնելու համար
։Հայ քանդակագործական արվեստի V—VII դարերի անխտիր բոլոր հուշարձանների շարքում
այս պատկերաքանդակը առանձնակի տեղ է գրավում և նրա դիման վրա Ներսավոր է պատկե-
րացնել այն բարձր աստիճանը, որին հասել էին հայ քանդակագործները։ Սյուս բոլոր հուշար-
ձանները կամ միտումնավոր կերպով ավերված են (տաշված են հատկապես դեմքերը) և կամ
հողմնահարվել են, կորցրել իրենց սկզբնական ձևերի արտահայտիչ գծերը։ Այս վերաբերում է
նույն Միսավանի տաճարում, Կոհազատ իշխանի պատկերաքանդակից աջ և ձախ դասավորված
մյուս պատկերաքանդակներին, որոնցից հատկապես ։ովսեփ եպիսկոպոսին պատկերող քան-
դակը գրալիորեն հողմնահարված է և մի մասն էլ նույնիսկ խիստ վնասված։ Բացի այս երեք
քանդակից, Միսավանի տաճարի արևմտյան պատի վրա կարելի է տեսնել մեկ այլ բարձրաքան-
դակի մնացորդներ—այնտեղ պատկերված է եղել ամբողջ հասակով կանգնած, վեղարաձև գլ-
խարկը գլխին մի հոգևորական, որի պատկերաքանդակից դժբախտաբար մնացել են միայն եզ-
րագծերը, այնքան կոպիտ ձևով տաշված է այն։ Սակայն միանգամայն անպարտ է մնացել
նրա մոտ եղած մակագրությունը, որից պարզ է դառնում, որ այստեղ պատկերված է եղել
.ովհաննես եկեղեցապան։ Մակագրությունը, սկսվելով բուն պատկերաքանդակի քարի վրա,
շարունակվում է դեպի աջ և տեղ զտնում պատի շարքերի վրա, ընդ որում, կասկած չի մնում,
որ պատկերաքանդակն ամբողջությամբ տեղադրվել է այստեղ հետագայում, երբ պատի շար-
վածքը վաղուց արդեն կար։ Մեր նպատակը չէ հանգամանորեն վերլուծել այդ պատկերաքան-
դակները։ Այստեղ մենք բավարարվում ենք հիշատակելով միայն, որ այդ պատկերաքանդակների
մոտ եղած մակագրությունները մեծապես օգնում են տաճարի թվագրությունը ճշտելուն—մի բան,
որը մինչև վերջերս էլ վեճերի առարկա էր, և տաճարի կառուցման տարեթիվը տատանվում
էր երկու դարի սահմաններում։ Դառնանք այդ մակագրություններին։

Սյունյաց Կոհազատ իշխանը չի հիշատակվում պատմիչների մոտ և հայտնի է միայն այս
պատկերաքանդակից[13]։ Սակայն դրա փոխարեն լավ հայտնի է Սյունյաց ։ովսեփ Ա եպիսկո-
պոսի գործունեության ժամանակը, որը, ըստ Ստեփանոս Օրբելյանի, գործել է 670—689 թթ.
ընթացքում։ Ինչ վերաբերում է երրորդ բարձրաքանդակին, որտեղ պատկերված է Թեոդորոս վա-
նականը, ապա մեր կարծիքով այն ներկայացնում է VII դարի երկրորդ կեսի հայտնի աստվա-
ծաբան Թեոդորոս Քռիենավորին, որն իր ուսումը ստացել է Սյունյաց դպրոցում և չէր խզել իր կա-
պերը Սյունիքի հետ նաև հետագայում։ Ըստ Հ. Աճառյանի, նա մահացել է 680 թ.[14]։ Իսկ այն
հանգամանքը, որ տաճարի արևմտյան պատին պատկերված է ։ովհաննես եկեղեցապանի պատ-
կերաքանդակը (ընդ որում այն ագուցված է այստեղ հետագայում, սակայն ոչ ուշ VII դարից—
այդ են վկայում նրա մոտ եղած մակագրության տառաձևերը), հնարավորություն է տալիս ենթ-
ադրելու, որ այստեղ պատկերված է ոչ այլ ոք, քան Հովսեփ Ա եպիսկոպոսին հաջորդող ։ով-
հաննեսը, որը և ամենայն հավանականությամբ շարունակել և ավարտել է Հովսեփ Ա-ի կողմից
կառուցվող տաճարը և հենց դրա համար էլ արժանացել այդ բարձր պատվին։ Կարելի է ենթ-
ադրել, որ Հովսեփ Ա եպիսկոպոսը տաճարի շինարարությունը հասցրել էր մինչև փոքր տրոմպ-
ները, և այստեղ էլ վրա էր հասել նրա մահը։ Աշխատանքները շարունակել էր գլխավորել Հով-
հաննես եպիսկոպոսը, որը և ամենայն հավանականությամբ ավարտել էր այն 690—691 թթ.
ընթացքում։

Բացի վերոհիշյալ պատկերաքանդակներից, տաճարի հարավային և արևմտյան ճակատների
խորշերի մեջ, նրանց վերին անկյուններում առկա են մի քանի, դժբախտաբար խիստ հողմնա-
հարված, պատկերաքանդակներ—դրանք համարյա թե կլոր քանդակներ են, դասավորված եռ-
անկյուն խորշերը ծածկող տրոմպների խորքում։ Այն հանգամանքը, որ այստեղ պատկերված
անձինք չունեն լուսապսակներ, վկայում է, որ այստեղ ներկայացված են աշխարհիկ անձինք,
թեև համապատասխան մակագրությունների բացակայությունը հնարավորություն չի տալիս որո-
շելու նրանց ով լինելը։ Սակայն դժվար չէ նկատել, որ այստեղ ևս քանդակագործները ձգտել
են հասնելու դիմանկարային նմանության, այնքան տարբեր, այնքան յուրահատուկ արտահայտ-
չականություն ունեն նրանք։ Բացառված չէ, որ այստեղ պատկերված են հենց այն իշխանները,
որոնք այս կամ այն ձևով օժանդակել են զգալի միջոցներ պահանջող այս տաճարի շինարա-
րության գործին։

---

13 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. 2, Երևան, 1944, էջ 643։
14 Նույն տեղում, էջ 299։

Սիսավանի տաճարը աչքի է ընկնում իր համաչափությունների հստակությամբ և միասնականությամբ։ Ըստ իր ճարտարապետական հորինվածքի տաճարը պատկանում է հայ ճարտարապետության մեջ դեռևս մեկ դար առաջ հայտնի այն ուշագրավ հորինվածքների թվին, որոնց նախակարապետն էր VI դարի վերջին կառուցված Ավանի տաճարը։ VII դարի ընթացքում այդ տիպը մարմնավորվեց այնպիսի հանգուցային հուշարձաններով, ինչպիսիք են Հռիփսիմեն, Թարգմանչացը, Գառնահովիտը։ VII դարի բազմաթիվ այլ հորինվածքների մեջ այս տիպը աչքի է ընկնում համամասնությունների արտակարգ տրամաբանական միասնությամբ և այստեղ պարզապես հնարավոր չէ ոչինչ ավելացնել և ոչ էլ պակասեցնել։ Սակայն այդ բնավ էլ չի նշանակում ստեղծագործական որոնումների քարացում — դրա առավել ցայտուն օրինակն է մեզ հետաքրքրող Սիսավանի տաճարը, որի ձևերը բնավ էլ կրկնություն չեն և նրա բոլոր տարրերը մշակված են հստակ տրամաբանությամբ։ Հանդիսանալով V—VII դարերի ճարտարապետական մեծ վերելքի ամենավերջին ներկայացուցիչներից մեկը, այն հնարավորություն է տալիս հստակ կերպով պատկերացնելու հայ դասական ճարտարապետության անցած ամբողջ ուղին, նշմարելու նրա վերջին սահմանագիծը։ Նրանից հետո, VIII դարի սկզբից, հայ ճարտարապետական արվեստի բուռն զարգացումը արհեստականորեն ընդհատվեց, և արաբական ծանր լծի տակ մոտ երկու գար կանգ առավ ամբողջ մոնումենտալ շինարարությունը։ Խիստ հատկանշական է, որ հայ ճարտարապետության VI—VII դդ. հնագույն թվագրված կառուցվածքը՝ Ավանի տաճարը և նույն դարաշրջանի թվագրված ամենավերջին կառուցվածքը՝ Սիսավանի տաճարը, կառուցված են միևնույն ճարտարապետական ոճի, միևնույն ծավալային կոմպոզիցիայի հիման վրա, մի կոմպոզիցիա, որն այնքան յուրահատուկ, այնքան հարազատ էր այդ շրջանի ամբողջ հայ ճարտարապետական մշակույթին և կարծես իր մեջ էր մարմնավորել նրա առավել յուրահատուկ կողմերն ու մեծագույն նվաճումները։